

«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
պետական ոչ առևտրային կազմակերպություն  
(ԵՊԼՀ)

**ԵՊԼՀ-ի 2013-2017ԹԹ.**  
**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
ԵՊԼՀ-ի զարգացման պատմությունը	4
Համալսարանի 2013-2017թթ. ռազմավարական ծրագրի հիմքում ընկած հիմնախնդիրների նկարագրություն	7
Համալսարանի տեսլականը	9
Համալսարանի առաքելությունը	9
Հիմնական արժեքները	9
Համալսարանի հեռապատկերը	10
Համալսարանի անձնակազմը	10
Համալսարանի գործունեության ուղղությունները	11
Համալսարանի ռազմավարական նպատակները և խնդիրները	11
Համալսարանի գործունեության սկզբունքները	14
Համալսարանի ռազմավարությունները	14
Հավելված. Համալսարանի գիտական գործունեության հիմնական ուղղությունները	16

## ՆԱԽԱԲԱՆ

Սույն ռազմավարական ծրագիրն ուրվագծում է ԵՊԼՀ–ի 2013-2017թթ. գործունեության հիմնարար ուղղությունները՝ ելակետ ունենալով հաստատության հեռանկարը: Ծրագրում համակցված են բուհի գործունեության ավանդական և նոր մոտեցումները՝ ի նպաստ մրցունակ հումանիտար մասնագիտական կրթության, անհատի և հասարակության առաջընթացի:

Ծրագիրը մշակվել է ԵՊԼՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների գործուն մասնակցությամբ՝ հաշվի առնելով հումանիտար մասնագիտական կրթության արդի հիմնահարցերի և գործընթացների, բուհի ներքին և արտաքին շահակիցների դաշտի, բուհի կարողությունների և գործունեության միջավայրի վերլուծության արդյունքները:

Փաստաթղթում սահմանված են բուհի հայեցակարգային մոտեցումները, որոնք կողմնորոշելու են նրա առաջիկա գործունեությունը և հավակնությունները կրթական, գիտական, հետազոտական և սոցիալական պատասխանատվության ուղղություններով: Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ *տեսլական, առաքելություն և արժեքներ, գործունեության ուղղություններ, ռազմավարական նպատակներ, ռազմավարական խնդիրներ, գործունեության սկզբունքներ, ռազմավարություններ:*

Տրված հայեցակարգային շրջանակները հիմք են լինելու գործողությունների պլանի մշակման և ռազմավարական ծրագրի իրականացման, վերահսկման և գնահատման համար՝ հետևյալ ինստիտուցիոնալ ուղղություններով. *ուսումնական գործընթաց, ուսանողական համակազմ, պրոֆեսորադասախոսական կազմ, գիտական և հետազոտական գործունեություն, բուհի գործունեության միջազգայնացում, ֆինանսատնտեսական գործունեություն և նյութատեխնիկական հենք, տեղեկատվական տեխնոլոգիաներ, կառավարում, սոցիալական պատասխանատվություն:*

Ծրագրի իրագործման ընթացքը ուղեկցվելու է բուհի ձեռքբերումների, ներքին և արտաքին միջավայրի փոփոխությունների վերլուծությամբ և գնահատմամբ, այն թույլ կտա քայլել ժամանակին համընթաց և նախաձեռնողական լինել նոր մարտահրավերներին ընդառաջ:

## ԵՊԼՀ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԵՊԼՀ-ն 21-րդ դար մուտք գործեց որպես լեզվաբանական համալսարան, սակայն 1995-ին համալսարանի կարգավիճակի, իսկ 2000-ին լեզվաբանական բնույթի ամրագրումը միտված էր ապագային, և դրանց մեջ գերակշռում էր տեսլականը, այլ ոչ թե փաստացի իրողությունների արձանագրումը: Եվ դա բնական էր. 1935 թ. որպես ռուսական մանկավարժական ինստիտուտ հիմնադրված, հետագայում օտար լեզուների մանկավարժական ինստիտուտ դարձած անգամ ամենաառաջատար ուսումնական հաստատությունն իր նախորդ պատմության ընթացքում կարող էր ունենալ միայն նոր «համալսարանական» երազանքների նախադրյալներ, որոնք պիտի այնքան հիմնավոր ու հաստատուն լինեին, որ իրատեսական և իրականանալի դառնար այդ երազանքը:

2000 թվականին արդեն իսկ ստեղծված էին /դա հաստատեց հետագա ընթացքը/ բուհի «մանկավարժական ինստիտուտ»-ից դեպի «լեզվաբանական համալսարան» զարգացման հիմնական նախադրյալները: Դրանք էին.

- ընտրված մասնագիտություններում որակյալ ուսումնական գործընթացի նախագծման, կազմակերպման և իրականացման փորձը,
- թե՛ լեզուների դասավանդման և ուսուցման գործում և թե՛ լեզվաբանության ոլորտում հետազոտական և տեսական ուսումնասիրություններում «լեզու-մշակույթ» միասնականության հիմնարար սկզբունքով առաջնորդվելու ակնհայտ արտահայտված միտումը,
- մասնագիտությունների և մասնագիտացումների բազմազան դարձնելու պահանջարկի գիտակցումն ու դրա իրագործման համար բավարար մարդկային և նյութատեխնիկական ներուժի կուտակումը, հանրությանը դրական, այն է՝ ավանդույթ դարձած որակյալ և հասարակության կողմից պահանջարկված կրթական ծառայություններ մատուցող բարձրագույն ուսումնական հաստատության կերպարով ներկայացած լինելու փաստը,
- Հայաստանի Հանրապետությունում և ՀՀ-ից դուրս բուհի առաքելությանը ներդաշնակ կրթական և գիտական հաստատությունների և կազմակերպությունների հետ ընդլայնվող և խորացող կապերը:

2004 թվականից արդեն լիիրավ լեզվաբանական համալսարան դարձած ԵՊԼՀ-ում սկսեցին կիրառել բուհի կողմից որդեգրած բարձրագույն մասնագիտական

պատրաստման չափորոշիչները, Բոլոնիայի սկզբունքների համապատասխանեցմանը նպատակաուղղված աշխատանքները, որոնք մեծապես խթանեցին եվրոպական կրթական տարածքի մեջ համալսարանի ինստիտուցիոնալ ինտեգրումը: Կազմելով ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխվող համակարգի անբաժանելի մաս՝ ԵՊԼՀ-ն բոլոր երեք աստիճաններում (2004-2005 ուս.տ.՝ բակալավրիատում, 2008-2009 ուս.տ.՝ մագիստրատուրայում և 2010-2011 ուս.տ.՝ հետբուհական կրթության մակարդակում՝ ասպիրանտուրայում) բարձրագույն կրթության ուսումնական գործընթացի կրեդիտավարկանիշային սկզբունքով կազմակերպման առաջատարներից է: Այսօր լուծված են շրջանավարտներին Եվրոպական հանձնաժողովի, Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ/ՍԵՊԵՍ-ի կողմից մշակված ձևին համապատասխանող հավելվածի 2 լեզուներով՝ հայերենով և անգլերենով, տրամադրման հարցերը, հաստատված են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնառողների շարժունությունը ապահովող միջազգային կապերը:

Գիտակցելով ինստիտուցիոնալ ներգրավվածությունը բովանդակային բարեփոխումներով զուգակցելու անհրաժեշտությունը՝ ԵՊԼՀ-ն ընդունել էր 2006-2010 թթ. իր զարգացման ռազմավարական ծրագիրը, որի իրականացման արդյունքում առկայացված են լեզվաբանական համալսարանի պարտադիր և բավարար հետևյալ որակները.

- լեզվաբանական կրթությունը նպատակաուղղված ծառայում է միջմշակութային հաղորդակցման հանրային պահանջարկի և բովանդակային բոլոր պահանջների բավարարմանը,
- ավանդաբար դասավանդվող ռուսերենը (1935-ից), գերմաներենը (1936-ից), անգլերենը և ֆրանսերենը (1937-ից), այնուհետև՝ իսպաներենն ու իտալերենը համալրվեցին այլ եվրոպական (բուլղարերեն, լեհերեն, հոլանդերեն և այլն) և Ասիայի տարածաշրջանի (չինարեն, հինդի, պարսկերեն, թուրքերեն, կորեերեն և այլն) լեզուներով, ինչի արդյունքում ԵՊԼՀ-ի «լեզուների ծառի» վրա իրենց տեղը գտան ավելի քան 20 լեզուներ,
- բակալավրիատի երեք ֆակուլտետների և մագիստրատուրայի ութ մասնագիտությունների շրջանակում իրականացնելով մասնագիտության պատրաստման մոտ 30 կրթական ծրագրեր՝ բուհն ապահովում է իր բազմապրոֆիլ բնույթը,

- համալսարանի աշխատակազմի ձևավորումն ու համալրումն իրականացվում է պրոֆեսորադասախոսական կազմի (որոնցից 69.7% ունեն գիտական աստիճան և կոչում) և այլ աշխատակիցների (վարչական և ուսումնաօժանդակ կազմ), ինչպես նաև փորձառու և երիտասարդ կադրերի իրատեսական համաչափության սկզբունքով,
- ԵՊԼՀ-ի դասախոսները հեղինակում են ուսումնական գործընթացում կիրառվող դասագրքեր, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուսումնաօժանդակ նյութեր, դպրոցական դասագրքեր,
- ԵՊԼՀ-ի համար գերակա գիտական ուղղություններով կազմակերպվում են միջազգային գիտաժողովներ, հրատարակվում են մենագրություններ և պարբերականներ,
- կատարվում են հետազոտություններ, և դրանց հիման վրա հաստատուն քայլեր են իրագործվում աշխատաշուկայի ոչ միայն առկա, այլև նախանշվող մասնագիտական պահանջարկը բավարարելու ուղղությամբ,
- հարաճուն զարգացում է ապրում «բուհ-հասարակություն» փոխադարձ կապը, մասնավորապես՝ համալսարանի կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների ցանկում կրթության լրացուցիչ և շարունակական ձևաչափերի ներառման շնորհիվ,
- որդեգրելով իր գործունեության բոլոր ուղղությունների միջազգայնացման սկզբունքը՝ ԵՊԼՀ-ն վերահաստատեց իր գործընկերական ներկայությունը ԱՊՀ տարածքում, նոր լիցք հաղորդեց եվրոպական համագործակցությանը և հիմնավոր հայտ ներկայացրեց տարածաշրջանային և մի շարք հարավասիական (Չինաստան, Կորեա) երկրների հետ համագործակցության համար, ինչի առնչությամբ կնքվել և գործառնության մեջ են դրվել բազմաթիվ միջազգային պայմանագրեր, ինչպես երկկողմանի, այնպես էլ ցանցային ձևաչափերով:

Այսպիսով, կատարելով 2006-2010 թթ. ռազմավարական ծրագրով ստանձնած պարտավորությունները, ԵՊԼՀ-ն ամրապնդեց իր՝ լեզվամշակութային կրթօջախի հայաստանյան և միջազգային վարկանիշը և բարենպաստ հիմք ապահովեց հետագա առաջընթացի համար:

2010 թ. ԵՊԼՀ-ն նշեց իր հիմնադրման 75-ամյակը, և կարճ ժամանակ անց ընդունվեց 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը: Սակայն ժամանակակից աշխարհի

հարափոփոխ իրողությունները և ՀՀ կրթական համակարգի շարունակական բարեփոխումը, մասնավորապես «Կրթության մասին» ՀՀ 36-րդ հոդվածի 21-րդ կետին համապատասխան՝ ՀՀ կառավարության կողմից կրթության որակավորումների ազգային շրջանակի հաստատումը և դրանից բխող ՈԱՇ-ի ներդրումն ու գործարկումն ապահովող հայեցակարգային մոտեցումները ռազմավարական ծրագրով ամրագրելու անհրաժեշտությունը օրակարգային դարձրին ԵՊԼՀ-ի ռազմավարական ծրագրի վերամշակումը և նոր 2013-2017թթ. Ռազմավարական ծրագրի ընդունումը:

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2013-2017ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

«Միջազգայնորեն մրցունակ բարձրագույն կրթության ոլորտի ստեղծման նախադեպը՝ որպես Հայաստանի տնտեսության վերափոխման հիմնական խթաններից»<sup>1</sup> մեկի ամրագրում, Հայաստանի առաջատար բուհերից մեկը հանդիսացող ԵՊԼՀ-ին պարտադրում է ուղենշային զարգացման լիցք հաղորդել իր իսկ ունեցած ձեռքբերումներին, բարեփոխումները դարձնել անդառնալի, շարունակական և համապարփակ: Այդ համատեքստում օրակարգային են դառնում ՀՀ կրթական ողջ համակարգի մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծմանը կոչված է նպաստել այս ծրագրի իրականացումը:

Կրթության, հատկապես բարձրագույն կրթության զարգացման վրա անխուսափելիորեն անդրադառնում են Հայաստանի մրցունակության բացասական փոփոխությունները այնպիսի կարևոր հենասյուների առումով, ինչպիսիք են մակրոտնտեսական կայունությունը՝ -46, տեխնոլոգիական պատրաստվածությունը՝ -3, շուկայի չափը՝ -7, նորարարությունը՝ -8:<sup>2</sup> Եվ թեև ըստ 2009-2010 թվականների Նորարարության համաշխարհային ցուցչի (INSEAD & CII, 2010)՝ Հայաստանը առաջադիմել է նորարարության ոլորտում՝ 104-րդ տեղից բարձրանալով 82-րդ տեղը, այդուհանդերձ, «Հայաստանի նորարարությանն առնչվող բոլոր ցուցիչները ցածր են 100-րդ հորիզոնականից՝ ուսումնական հաստատությունների որակ, ենթակառուցվածքի

<sup>1</sup> Հայաստանի ազգային մրցակցության զեկույց. Բարձրագույն կրթության մարտահրավերը 2010, © «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2010, էջ 9, (այսուհետ՝ ՀԱՄՁ) [http://www.ev.am/media/documents/ACR/ACR2010/ACR2010\\_arm.pdf](http://www.ev.am/media/documents/ACR/ACR2010/ACR2010_arm.pdf)

<sup>2</sup> ՀԱՄՁ, էջ 35-36:

յուրացում և օգտագործում, մասնավոր վարկերի հասանելիություն, նորարարության միջավայրն ընկերություններում և նորարարության ընդհանուր միջավայրը, ինչպես նաև արտաքին և ներքին մրցակցության նկատմամբ բաց լինելը»,<sup>3</sup> որը հատվածային է դարձնում «կրթություն – աշխատաշուկա» կապը:

Առողջ մրցակցության կանոնների աղավաղումը **բացասաբար է ազդում «կրթություն – աշխատաշուկա» ներգործուն կապի հաստատման** վրա: «Կրթություն – աշխատաշուկա» երկկողմանի հարաբերությունների տեսանկյունից կարելի է արձանագրել մի կողմից մի շարք մասնագիտությունների գծով շուկայի պահանջարկի մասնակի ձևավորումն ու ձևակերպումը, գիտակցումն ու բավարարումը, մյուս կողմից՝ շրջանավարտների կողմից բուհում ձեռք բերած մասնագիտական ձեռնահասությունների իրացման և զբաղվածության խնդիրների անբավարար կարգավորումը: Սակայն այդ հիմնախնդիրը ևս ունի պատճառահետևանքային ավելի լայն համատեքստ և, մասնավորապես, պայմանավորված է նրանով, որ «Հայաստանի տնտեսությունն իր դիվերսիֆիկացման աստիճանով գիջում է համեմատվող երկրների մեծ մասին»:<sup>4</sup>

**Արդյունքահեն մոտեցումների անբավարար կիրառումը** իր հետ բերում է նաև կրթության մակարդակների, առավելապես **«դպրոց – միջնակարգ մասնագիտացված հաստատություն – բուհ» կառուցակարգային և բովանդակային խզվածություն**, որն էլ խոչընդոտում է մասնագիտական կրթության բուհական և միջնակարգ ծրագրերի բազմազանեցումը, դրանց լիարժեք իրականացումը և միջնակարգ կրթության բարեփոխումների միասնական գործընթացը:

«Հ համալսարաններին առաջիկայում առաջադրվելու է հավակնոտ նոր մարտահրավեր, այն է՝ դրանց գիտակրթական գործունեությունը համապատասխանեցնել հետազոտական համալսարանների՝ Հայաստանի գիտության պետական կոմիտեի մշակած օրենսդրական չափորոշիչներին:

Այդ ցուցանիշներից մեծապես կախված է նաև **կրթության միջոցով անհատի շարունակական զարգացման ոչ լիարժեք կիրառումը**, ինչպես նաև **մասնագիտական ցանցերի արճատվածությունը**: Անհատի շարունակական կրթությունը համալսարանի համար պետք է լինի ոչ միայն կրթական արտադրանքի գործառույթ, այլև սեփական գիտակրթական ներուժը կատարելագործելու և դրանով համալսարանը հանրային

<sup>3</sup> ՀԱՄՁ, էջ 23:

<sup>4</sup> ՀԱՄՁ, էջ 27:



միջավայր դարձնելու գերխնդիր: Իր ցանցային, բովանդակային, գործառնական և կազմակերպչական կատարելագործված որակների շնորհիվ ԵՊԼՀ-ն ի զորու է ստանձնել այդպիսի միջավայրի դերը:

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԱԿԱՆԸ**

(տեսլականը կառույցի ցանկալի ապագայի և/կամ գործունեության ցանկալի, հեռահար արդյունքի նկարագրությունն է)

***ԵՊԼՀ-ն սպեղծագործ միտք, մրցունակություն, առաջընթաց խթանող կրթագիտական միջավայր է:***

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ**

(առաքելությունը կառույցի գլխավոր նպատակն է՝ ռազմավարական ծրագրի ժամկետներում)

ԵՊԼՀ-ի առաքելությունն է խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական տարածքներին ինտեգրումը և ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ նպաստելով անհատի շարունակական զարգացմանը՝ հումանիտար գիտությունների ոլորտում գիտելիքի ստեղծման, փոխանցման և միջմշակութային հաղորդակցման կարողությունների ու հմտությունների ձևավորման միջոցով:

## **ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ**

Համալսարանն իր առաքելությունն իրագործելիս կողմնորոշվելու է հետևյալ արժեքներով.

- **արժանապատվություն,**
- **արդարություն,**
- **թափանցիկություն,**
- **հավասարություն,**
- **ակադեմիական ազատություն,**
- **խոսքի ազատություն,**

- տարբերվելու իրավունք,
- բարձր որակ,
- հաշվետվունակություն:

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱՊԱՏԿԵՐԸ

Համալսարանը ձգտում է դառնալ՝

- հաստատություն, որի մուտքը և կրթական ռեսուրսները մատչելի են սովորողների տարբեր սոցիալական և տարիքային խմբերին, բարձրագույն և հետբուհական կրթության ներքին և արտաքին սպառողներին,
- հաստատություն, որը հարմարունակ է միջավայրի փոփոխություններին, արագ և համարժեք արձագանքում է հասարակության և տնտեսության փոփոխվող կարիքներին, աշխատուժի շուկայի պահանջարկին,
- հաստատություն, որն էական դերակատարություն ունի տնտեսական զարգացման ազգային ու տարածաշրջանային նորարարական ծրագրերում,
- հաստատություն, որն ուսանողներին պատրաստում է լիարժեք ինքնադրսևորման, մասնագիտական առաջընթացի և կարիերայի համար,
- հաստատություն, որն ապահովում է առաջնակարգ կրթություն՝ անհատի բազմակողմանի զարգացման, ամուր հիմքի ստեղծման և ուսումնական գործընթացում դասախոսների ու սովորողների արդյունավետ համագործակցության միջոցով,
- հաստատություն, որտեղ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն ինտեգրված են կրթական և հետազոտական գործընթացներին:

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

- Համալսարանի անձնակազմի ճանաչում և գնահատում:
- Համալսարանի անձնակազմի աշխատանքային առաջընթացի խրախուսում:

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կրթական
- Գիտական-հետազոտական
- Ծառայություններ հասարակությանը

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**Նպատակ 1. Ապահովել բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի լիարժեք իրականացումը՝ Բոլոնիայի սկզբունքների ներքո**

### *Խնդիր 1.1*

Կատարելագործել բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան

### *Խնդիր 1.2*

Ընդլայնել հետբուհական կրթության ոլորտները

### *Խնդիր 1.3*

Մշակել հետբուհական կրթության ծրագրերը՝ ըստ ոլորտների

**Նպատակ 2. Հասնել կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) լիարժեք և ճշգրիտ կիրառմանը կրթական ծրագրերի մշակման, կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացներում**

### *Խնդիր 2.1*

Մշակել ուսանողների գիտելիքների գնահատման մեթոդաբանության հայեցակարգ՝ կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) պահանջներին համապատասխան

### *Խնդիր 2.2*

Ներդնել ուսումնական գործընթաց ուսանողների գիտելիքների գնահատման նոր ցուցիչներ

**Նպատակ 3. Համապատասխանեցնել որակի ներքին ապահովման գործընթացը Բարձրագույն կրթության որակի ապահովման ասոցիացիայի (ENQA) և ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման /հաստատված 30.06.2011 թ. 955-Ն/ չափանիշներին**

### *Խնդիր 3.1*

Համապատասխանեցնել կրթության բովանդակությունը եվրոպական պահանջներին

### *Խնդիր 3.2*

Մշակել պրոֆեսորադասախոսական անձնակազմի (ՊԴԱ) վերապատրաստման նոր պահանջներ և խթանել ՊԴԱ-ի որակավորումների բարձրացումը

*Խնդիր 3.3*

Նպաստել քննադատական և ստեղծագործական մտքի զարգացմանը

*Խնդիր 3.4*

Ապահովել ուսումնական գործընթացը ժամանակակից տեխնոլոգիաներով, գրադարանային և այլ ռեսուրսներով

*Խնդիր 3.5*

Խթանել տեղեկատվական ռեսուրսների համալրումն ու արդիականացումը

*Խնդիր 3.6*

Խթանել ուսանողների մասնակցությունը կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և վերահսկողության գործընթացում

*Խնդիր 3.7*

Ներդնել համալսարանի ներքին որակի վերահսկման (մոնիթորինգի) և գնահատման մեխանիզմներ՝ մշտադիտարկում, պարբերական ինքնավերլուծություն, խնդիրների բացահայտում և գնահատում, թիրախային գործողությունների պլանավորում և իրականացում

#### **Նպատակ 4. Խթանել ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունությունը՝ առաջնորդվելով Լյուվենյան հռչակագրում ամրագրված պահանջներով**

*Խնդիր 4.1*

Ընդլայնել ուսանողների և ՊԴԱ-ի շարժունության ձևերի կիրառումը

*Խնդիր 4.2*

Մշակել և ապահովել կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հիման վրա ուսանողների գիտելիքների գնահատման վերջնարդյունքների փոխանցելիության չափանիշները

#### **Նպատակ 5. Ձևավորել հարատև կրթության համակարգ՝ Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակի պահանջներին համապատասխան**

*Խնդիր 5.1*

Ապահովել նախորդող կրթության արդյունքների ճանաչում համադրելի կրթական ծրագրերի և որակավորումների միջոցով

*Խնդիր 5.2*

Ընդլայնել արտաքին շահառուների ընդգրկվածությունը հարատև հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերում

#### **Նպատակ 6. Խթանել գիտահեն մտքի զարգացումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան**

*Խնդիր 6.1*

Աջակցել գիտահեն կրթական միջավայրի ձևավորմանը:

*Խնդիր 6.2*

Նպաստել համալսարանում իրականացվող գիտական և հետազոտական աշխատանքների արդյունքների ներդրմանը ուսումնական գործընթաց՝ ապահովելով կրթության, գիտության և հետազոտության փոխկապակցվածությունը

*Խնդիր 6.3*

Ապահովել սերտ կապ դասավանդման, ուսուցման և հետազոտության միջև

*Խնդիր 6.4*

Ապահովել ՊԴԱ-ի մասնակցությունը գիտական դրամաշնորհային ծրագրերին

*Խնդիր 6.5*

Աջակցություն ցուցաբերել անհատ հետազոտողներին և հետազոտական խմբերին

## **Նպատակ 7. Ապահովել ֆինանսական գործունեության թափանցիկությունը և նյութատեխնիկական բազայի բարելավումը**

*Խնդիր 7.1*

Մշակել ֆինանսական հոսքերի բազմազանեցման և հասանելիության մեխանիզմներ

*Խնդիր 7.2*

Մշակել ՊԴԱ-ի աշխատավարձի բարձրացման ճկուն մեխանիզմներ

*Խնդիր 7.3*

Նպաստել ստորաբաժանումների սեփական արտաբյուջետային միջոցների ձևավորմանը և խթանել նրանց նախաձեռնությունը ինքնուրույն ֆինանսական միջոցների ձևավորման գործընթացներում

*Խնդիր 7.4*

Մշակել և ներդնել ուսանողների ֆինանսական աջակցության համակարգ

*Խնդիր 7.5*

Ապահովել նյութատեխնիկական բազայի արդիականացման գործընթաց

## **Նպատակ 8. Զարգացնել և արդիականացնել կառավարման համակարգը**

*Խնդիր 8.1*

Ապահովել վարչական անձնակազմի կառավարչական հմտությունների կատարելագործումը վերապատրաստումների միջոցով

*Խնդիր 8.2*

Ընդլայնել էլեկտրոնային կառավարման համակարգի հասանելիության հնարավորությունները աշխատակիցների համար

*Խնդիր 8.3*

Բարձրացնել ստորաբաժանումների ինքնավարությունը

*Խնդիր 8.4*

Խթանել որոշումների կայացման և իրականացման միջամբիոնական և միջֆակուլտետային հորիզոնական մեխանիզմները

*Խնդիր 8.5*

Խթանել ուսանողական ինքնավարության ձևերի բազմազանեցումը և զարգացումը

*Խնդիր 8.6*

Ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը

## **Նպատակ 9. Խթանել համալսարան - հասարակություն ներգործուն փոխհարաբերությունների զարգացումը**

### *Խնդիր 9.1*

Ապահովել համալսարանի հասանելիությունը հանրության բոլոր խավերի համար

### *Խնդիր 9.2*

Ապահովել համալսարանի ներդրումը հասարակական կյանքում՝ գիտելիքի հաղորդման, տարածման և կիրառման միջոցով

### *Խնդիր 9.3*

Բարձրացնել համալսարանի դերը ազգային և միջազգային ակադեմիական միջավայրում

### *Խնդիր 9.4*

Ընդլայնել գործարար/ձեռներեց, հասարակական և բարեգործական կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության հնարավորությունները

### *Խնդիր 9.5*

Բազմազանեցնել փոխգործակցությունը աշխատաշուկայի հետ

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

- Կրթության ձևի և բովանդակության շարունակական ու միասնական արդիականացում և համալրում,
- Կրթության որակի ապահովում,
- Կրթական, գիտական ու հետազոտական գործընթացների առաջընթաց, միասնականացում և միջազգայնացում,
- Դասախոսների և ուսումնառողների, ինչպես նաև արտաքին շահակիցների ստեղծագործական համագործակցություն,
- Կառավարման նորարարական մոտեցումների կիրառում,
- Ակադեմիական ազատությունների և համալսարանական ինքնավարության զարգացում,
- Մտավոր սեփականության պահպանում,
- Մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորում և կառավարում:

## **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\***

*\*Առանձին ենթավերնագրերում տրված ռազմավարությունները կիրառելի են նաև այլ ենթավերնագրերի նկատմամբ:  
(գործունեության իրականացման հիմնական մոտեցումները)*

### ***Ուսումնական գործընթաց***

- Մասնագիտական կրթական ծրագրերի մրցունակություն և բազմազանության ապահովում
- Լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի ընդլայնում և համակարգում

### ***Ուսանողական համակազմ***

- Ուսանողական համակազմի համալրում և մասնագիտական կողմնորոշում

### ***Պրոֆեսորադասախոսական կազմ***

- ՊԴ կազմի մասնագիտական զարգացման (վերապատրաստում, վերաորակավորում) մեխանիզմների կատարելագործում

**Գիտական և հետազոտական գործունեություն**

- Գիտական և հետազոտական արդյունքի առևտրայնացում
- Կրթության, հետազոտության և գիտության փոխկապակցում

**ԲՈՒՀ-ի գործունեության միջազգայնացում**

- Մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանեցում միջազգային պահանջներին
- Միջազգային համագործակցության ձևաչափերի բազմազանեցում

**Ֆինանսարևութական գործունեություն և նյութատեխնիկական բազա**

- Ֆինանսական հոսքերի բազմազանեցում
- Նյութատեխնիկական բազայի արդիականացում

**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**

- ՏՀՏ-ների ներդրման շրջանակների ընդլայնում և կիրառման օպտիմալացում
- Տեղեկատվական ռեսուրսների նպատակային արդիականացում և համալրում

**Կառավարում**

- Կառավարման համակարգի կատարելագործում
- Կազմակերպական, կառավարչական մասնակցային և ներգործուն մշակույթի ձևավորում
- Մարդկային ներուժի նպատակային իրացում

**Սոցիալական պատասխանատվություն**

- Մասնակցություն հանրային նշանակություն ունեցող ազգային և միջազգային ծրագրերին
- Հասարակության հետ շարունակական և ներգործուն փոխհարաբերությունների ապահովում

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### **I. Տեսական լեզվաբանություն**

- Ռոմանագերմանական լեզվաբանություն
- Ռուսերենագիտություն
- Հայերենագիտություն
- Զուգադրական տիպաբանություն
- Խոսույթի տեսություն
- Լեզվագործաբանություն
- Լեզվամշակութաբանություն և հասկացութաբանություն
- Հանրալեզվաբանություն և լեզվաքաղաքականություն

### **II. Կիրառական լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն**

- Թարգմանչական գործ
- Լեզվաբանական փորձագիտություն

### **III. Մանկավարժություն**

- Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա
- Հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդում
- Ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդում
- Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ
- Շարունակական և լրացուցիչ կրթություն

### **IV. Կրթության կառավարում**

- Հանրային կառավարման բարեփոխումներ և տեսական հենք
- Կառավարչական և կազմակերպական մշակույթ
- Բարձրագույն կրթության բարեփոխումներ
- Կրթական իրավունք և օրենսդրություն

### **V. Համաշխարհային գրականություն և մշակույթ**

- Գրականության պատմություն և տեսություն
- Մշակույթի պատմություն
- Համեմատական գրականագիտություն
- Բրյուսովագիտություն

### **VI. Քաղաքագիտություն**

- Հետխորհրդային տրանսֆորմացիա
- Հակամարտությունների կարգավորում
- Հաշտեցման գործընթացները միջազգային հարաբերություններում
- Ինքնություն և ինտեգրում